ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **<u>Անունը, Ազգանունը</u>**

   Լևոն Մկրտչյան

2. **<u>Զբաղեցրած պաշտոնը</u>**

   ՀՀ կրթության և գիտության նախարար

3. **<u>Գործուղման վայրը և ժամկետները</u>**

   Մոսկվա՝ 2018 թվականի մարտի 26-ից 28-ը:

4. **<u>Հրավիրող կողմը</u>**

   - Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարար Օ.Յու.Վասիլևայի կողմից պատասխան այցի հրավեր:

   - Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի տնօրեն Վ.Ա. Մատվիևի կողմից հրավեր:

5. **<u>Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը</u>)**

Ռուսաստանի Դաշնություն պատասխան այցի շրջանակում՝ կրթության և գիտության ոլորտում համագործակցության ընդլայնման և համատեղ նոր ծրագրային առաջարկների ու նախաձեռնությունների իրագործման հնարավորությունների քննարկում:

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) շրջանակում ընդհանուր առաջարկությունների քննարկում և որոշման կայացում՝ ուղղված միջազգային գիտատեխնիկական համագործակցության արդյունավետության բարձրացմանը:

6. **<u>Քննարկված թեմաները</u>**

Կրթության և գիտության բնագավառում հայ-ռուսական համագործակցության ընդլայնմանն ուղղված նոր նախաձեռնությունների և հնարավորությունների իրագործման քննարկում:

ՄՀՄԻ առաջատար լաբորատորիաների ձեռքբերումների շրջանակում երկարաժամկետ ռազմավարական ծրագրի նախագծի մշակման և գիտատեխնիկական համագործակցության զարգացմանն ուղղված քայլերի քննարկում:

7. **<u>Հանդիպումները, ելույթները,</u>**

Պատասխան այցի շրջանակում հանդիպումներ են տեղի ունեցել Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարար Օլգա Վասիլևայի, ՌԴ նախագահի օգնական Անդրեյ Ֆուրսենկոյի, Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի ռեկտոր Վիկտոր Սադովնիչիի և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Ալեքսանդր Սերգեևի հետ:

Մասնակցություն միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) կառավարման բարձրագույն մարմնի կոմիտեի լիազոր ներկայացուցիչների աշխատանքներին և գիտաժողովին, որին հրավիրված էին նաև ՄՀՄԻ անդամ-պետությունների գիտության, կրթության, ինովացիոն ոլորտի նախարարներ, կառավարությունների լիազոր ներկայացուցիչները, դեսպաններ և պատվավոր հյուրեր միջազգային գիտական համայնքից: Գիտաժողովում հանդես եմ եկել ելույթով, որտեղ կարևորվել է «կրթություն-գիտություն-արտադրություն» եռանկյունու իրագործումը և Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ համագործակցությունը, որն անհրաժեշտ է Հայաստանում միջուկային և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, միջազգային հետազոտություններում հայ գիտնականների ինտեգրման և այդ բնագավառի կադրերի պատրաստման գործում՝ նպաստելով ձեռնարկություններում նոր բարձր տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպես նաև նրանց դերի ավելացմանը համաշխարհային շուկայում:

8. **<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>**

Կարևորելով կրթության և գիտության բնագավառում առկա հայ-ռուսական համագործակցությունը՝ քայլեր են ձեռնարկվել ավանդական կապերի ամրապնդման և հետագա զարգացման ուղղությամբ: Անդրադարձ է կատարվել ՌԴ նախարարի Երևան կատարած այցի ընթացքում ձեռքբերված երկկողմ պայմանավորվածություններին:

Հանդիպումների արդյունքում ռուսական կողմը պատրաստակամություն է հայտնել աջակցել ՀՀ դպրոցներում ռուսաց լեզվի ուսուցման և դասավանդման մեթոդաբանության մշակման հարցում: Ռուսական կողմն ընդգծել է, որ հետաքրքրված է Հայաստանի դպրոցներում «Շախմատ» առարկայի

դասավանդման արդյունավետ փորձով: Հայտնեց նաև պատրաստակամության մասին փոխանցելու թերհամալրված դպրոցներում կրթության կազմակերպման ռուսական փորձը:

Անդրադառնալով բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներին՝ նշվել է, որ Հայաստանում այժմ քննարկվում է «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունումից հետո զարգացման և համագործակցության նոր հեռանկարներ են բացվում համալսարանական գիտության համար: Այս համատեքստում կարևորվել է գիտական համատեղ կլաստերների ստեղծման հնարավորությունը, որը մեխանիզմներ կստեղծի գիտական ինստիտուտներում կրեդիտների կուտակման, ուսանողների և հետազոտողների շարժունության համար: Պայմանավորվածություն է ձեռք բերվել կրթության և գիտության ոլորտում ընդլայնել համագործակցությունը՝ նոր ծրագրերի իրականացմամբ, փորձի և տեղեկատվության փոխանակմամբ:

Միաժամանակ, քննարկվել են բարձրագույն կրթության բնագավառում հայ-ռուսական համագործակցությանը, միջբուհական կապերի ամրապնդմանը, ինչպես նաև Մ.Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի գործունեության արդյունավետության բարձրացմանը, կրթական ծրագրերի ընդլայնմանն ու զարգացմանն ուղղված մի շարք հարցեր: Շեշտվել է համալսարանական գիտության զարգացման կարևորությունը և առաջարկվել է Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղում ներդնել մագիստրոսական և ասպիրանտական ծրագրեր՝ թիրախային դիտարկելով բնագիտական ուղղությունները: Քննարկվել է Երևանի մասնաճյուղում դասավանդող անձնակազմի վերապատրաստման ծրագրերի իրականացման հնարավորությունը: Ռեկտոր Վ. Սադովնիչին պատրաստակամություն է հայտնել աջակցել քննարկված հարցերի կարգավորմանը և նախաձեռնությունների իրականացմանը՝ Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղում ներդնելով կրթական նոր ծրագրեր և ստեղծելով հայ-ռուսական գիտակրթական երկխոսության ևս մեկ արդյունավետ հարթակ:

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Ալեքսանդր Սերգեևի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են գիտության բնագավառում երկու երկրների համագործակցության ընդլայնմանը վերաբերող մի շարք հարցեր:

Հայաստանում ընթացող գիտության ոլորտի բարեփոխումների շրջանակում ներկայացվել է, որ Հայաստանն անդամակցում է Եվրոպական միության գիտության և նորարարությունների «Հորիզոն 2020» ծրագրին: Որպես արդյունավետ մոդել նախատեսվում է ստեղծել գիտական կլաստերներ, որտեղ համալսարանները, գիտական ինստիտուտները և գործարար ոլորտն աշխատելու են համատեղ՝ ստեղծելով փոխշահավետ համագործակցության հարթակ: Ընդգծվել է ուսանողների շարժունության ապահովման կարևորությունը, որի արդյունքում ուսանողները կկարողանան կրեդիտներ ձեռք բերել նաև գիտահետազոտական ինստիտուտներում:

Ձեռք է բերվել երկկողմ պատրաստակամություն իրականացնելու համատեղ գիտատեխնիկական ծրագրեր՝ համագործակցելով ՌԴ կառավարությանն առընթեր հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի հետ: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Ալեքսանդր Սերգեևը շեշտել է, որ Հայաստանի հետ բարեկամական հարաբերությունների պահպանումն ու համագործակցության ամրապնդումը ռուսական կողմի հետաքրքրության շրջանակում է: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՌԴ-ում կազմակերպելու թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանություններ, ինչպես նաև իրականացնելու մասնագիտական կուրսեր, դասախոսություններ և անվանի գիտնականների փոխադարձ այցեր:

Կրթության և գիտության քաղաքականության հարցերով ՌԴ նախագահի օգնական Անդրեյ Ֆուրսենկոյի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են կրթության և գիտության ոլորտում հայ-ռուսական երկկողմ հարաբերությունների ամրապնդման հարցերը: Պայմանավորվածություն է ձեռքբերվել բնագիտական ուղղություններով կոնկրետ ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:

9. **<u>Գործուղվողը</u>**

   ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

10. **<u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>**

    03.04.2018